

չինած, երեք, չորս եւ հինգ եւ մին քան զմին
գեղեցիկ եւ պատվական :

ՊԱՆԹԻՈՆ

- Եւ անտի մտաք յեկեղեցի մի զմպէթա-
 65 շէն կամարակապ, յոյժ լայն եւ մեծ. եւ
 զմպէթին խուզան տափարակ որպէս մէջիթ-
 նուն. եւ ասին թէ կռապաշտից շէնք են, զոր
 ի տօնի կռոցն անդր ժողովէր բազմութիւն
 արանց եւ կանանց զոհել զիւաց. եւ այնպէս
 70 մեծ եարու է եւ վերին կամարն ի բոլորն հու-
 ճուրայք բազում. զոր մարդն մտեալ ի ներսն՝
 սասանի. եւ այն առանց սեան, թէպէտ յոլով
 տեսաք յայլ տեղ՝ Պուրսա եւ Կեսարիայ, ապա
 սորա պէս ահարկու եւ զարմանալի չկայ. որ
 75 այժմ եկեղեցի է եւ անուն Ամենայն սրբոց
 տօն դրած, զոր առաջն ամենայն զիւաց տօ-
 նէին : Եւ ի դրաց զիհն ի ժամատունն Ը սիւն
 կայր հաստ եւ երկայն, զոր չափեալ երեք
 խուլած ելաւ հաստութիւնն, եւ եօթն երկայ-
 80 նութիւնն : Եւ ունէր մեծ դուռ մի երկու
 փեղկէ մեծ քան զԱյա Սօֆու լայնքն, երեք
 խուլած եւ երկայնքն հինգ. եւ ազնիւ սփեա-
 րով պատած զդուռն, զոր ոմանք ասին թէ
 ոսկով խառն է. եւ զայս դուռս պիտի դնեն

85 Յարութեան ի ժամանակս քրիստոնէութեան :

Եւ հուպ սմին կային եկեղեցիք եօթն
 միատեղ :

Ապա գնացեալ տեսաք զսարայրն Ուլիա-